Մերունին՝

— Ջահէ՛լ ուխտաւոր, բերանդ վարդեր է փռում չորս կողմդ:

— Սուրբ հայր: Ես միայն մէկ բան անել կարող եմ,— քայլել Քո ցանած վարդերի վրայ: Ի՞նչ եմ ես, Քո բաղդատութեամբ: Ի՞նչ արժէք ունի ջրի կաթիլը՝ ծովի մէջ, աւազի հատիկը՝ անապատում, ճրագի լոյսը՝ արեգակի առաջ: Քո կամքը — իմն էլ է:

Օտարականի համար վանքի հիւրատունը պատրաստում է «մի իշխանական սենեակ»: Եւ դերման ճամբորդը չի կարող հասկանալ իր նախորդների դժգոհութիւնը այն մասին, թէ օտարների հանդէպ էջմիածնի վանքում ցոյց չէ տրւում հիւրասիրութիւն: Բանաստեղծի աչքի առջեւ տարիներ յետոյ էլ, հայրենիք վերադարձին, «միայն սիրելի եւ հաճելի պատկերներ են վերստեղծւում», երբ ամէն անգամ նա «վերապրում է իր օրերը Պարսկաստանի եւ Օսմանեան պետութեան դէմ ցցուած՝ քրիստոնէութեան այդ հնաւուրց մարտկոցում»:

Ժամանակի կենցաղավարութեան տեսակէտից հետաքրքրական է նաեւ Բ.ի այն դիտողութիւնը, թէ կայսերական տան մի քանի անդամների եւ Ռուսաստանի «ամենակարող զինուորական նախարար իշխան Զերնիշեվի» էջմիածին այցելելուց յետոյ «կէս-եւրոպական» կերպարանք են առել. թէ՝ այնտեղ «մինչեւ իսկ սեղան-աթոռի, դանակ-պատառաքաղի սփոց-անձեռոցիկի, ինչպէս նաեւ շիշ ու բաժակի գործածութիւնն է մուտք գործել»: Եւ «այն սեղանը, որի վրայ մենք մի քանի եպիսկոպոսների ու արքեպիսկոպոսների հետ միասին ճաշում էինք, այնպէս ճաշակով էր ծածկուած, որ անդամ Փարիզի ամենաշքեղ ճաշարաններում աւելի լաւը չէի տեսել»:

Հիւրերի եւ մանաւանդ Ռոզէնի առանձին ուշադրութիւնը գրաւում է վանքի դրշագիրների մատենադարանը: Բանաստեղծ-ճամբորդը զարմանում է, որ պատմագրական եւ կրոնական աշխատութիւններով այնչափ հարուստ հայ մատենագրութիւնը զուրկ է բանաստեղծական ոգէ արժէքաւոր երկից, հակառակ այն բանին, որ «երկրի պատմութիւնը եւ աշխարհագրական դիրքը շատ առիթներ են ընձեռում այդ ուղղութեամբ»: Դրա փոխարէն Բ.ին վստահացնում են, որ նա իր ծրագրած «Ժողովրդական երգերի ժողովածուի» համար հարուստ նիւթեր կարող է ստանալ Հայաստանում: Իսկ թէ այդ ուղղութեամբ Աբովեան ինչ ծառայութիւն է մատուցել Բողենշտէդտին, այդ մասին խօսք եղել է արդէն:

Բողենշտէդտի մօտ գտնում ենք նաեւ ժամանակակից հայ գիւղի նկարագրութեան մի նմուշ («Հազար ու մի օր», Ա. 182):

Ըստ երեւոյթին դա լեռնային հայ գիւղ է եղած, որ դիտել է ճամբորդը՝ Երեւանից Թիֆլիս վերադարձի միջոցին, ճանապարհին:

«Այդտեղ — ասում է նա — (հայ գիւղում) եւս ես տեսայ նոյն կեղտոտ, կէս-ստորերկրեայ հիւղակները ,ինչ որ՝ Վրաստանում: Իւրաքանչիւր տան առջեւ կայ տարթի (անասունի աղբից) բուրդ... Եւ պէտք է տեսնել, թէ բաղդատարար շատ լաւ հագուած հայուհիները — դեղին քօչեր, կարմիր վարտիք, կարճ շրջազգեստ, երկայն քող — ինչպէս եռանդով զբաղուած են տարթի բուրդեր կառուցանելով: Նոյն այդ տեսարանն էր բացւում մեր աչքի առջեւ ամէն անգամ, երբ անցնում էինք հայ գիւղի մօտով: Իսկ երբ մարդ հայ գիւղական տան սեմից է ներս ոտք դնում, նրան թւում է, թէ Աբրահամ նահապետի ժամանակներն են:

«Բարեկեցիկ գիւղացիների տան մէջ՝ սովորաբար մի առանձին սենեակ յատկացուած է լինում կանանց սեռին: Իսկ չքաւորների մօտ, որոնք ճնշող մեծամասնութիւն են կազմում գիւղերում, տնակը բաղկացած է լինում մէկ հատիկ ծածկից: Այդտեղ մարդկանց ընտանի կենդանիներից բաժանողը մի փայտեայ սիւն է միայն: Խօսք լինել չէ կարող, ի հարկէ, սեղան-աթոռի, պատուհանի մասին: Լոյսը ներս է թափանցում հիւղակի երդիքից: Հողէ գետինը յարդով է ծածկուած լինում, որի վրայ փռուած փսխաթները (ունեւորների մօտ՝ դորգերը) ծառայում են աթոռի, անկողնի եւ բազմոցի տեղ: Կանանց սենեակի մէջտեղում սովորաբար գտնւում է թոնիրը, ուր լաւաշ են թխում»:

Հայ գիւղի այս համառօտ նկարագրութիւնը տալիս Բողենշտէդտ չէր երեւակայել անշուշտ, որ դեռ այսօր էլ, իր այցելութիւնից 82 տարի անց, հայ գիւղերը, մանաւանդ լեռնայինները, շատ էլ տարբեր պատկեր չեն ներկայացնում: Մի պատկեր, որ հայ գիւղին ժա-